

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՅ-ՔԱՅԵՐԵՆ ԲԱՐՔԱՌՈՒՄ

Ս. Ր. ՂԱԼԲԱՆՅԱՆ

Հայ-թաթերեն բարբառը, որը լեզվական փոխազդեցությունների մի ուշագրավ համակարգ է, XIX դարի կեսից սկսած գրավել է թե՛ հայ և թե՛ օտարազգի գիտնականների ուշադրությունը, սակայն առ այսօր այս բարբառի ու նրանով խոսող ժողովրդի մասին հրապարակի վրա գիտական լուրջ ուսումնասիրություն չկա:

Հայ-թաթերի և նրանց բարբառի մասին առաջին անգամ հայ մամուլում համառոտ տեղեկություններ են հաղորդվել «Արարատ» ամսագրի 1871 թ. մարտի համարում, ուր նշված է, որ «Մադրասցիք (Շամախու շրջան—Ս. Ղ.) խոսում են երկու լեզվով միմյանց հետ՝ հայերեն և թաթերեն»¹:

«Աղվանից երկիր և դրացիք» աշխատության մեջ Մակար Բարխուդարյանը անդրադարձել է հայ-թաթերի ու նրանց բարբառի վերաբերյալ զանազան հարցերի, որոնք գիտական մեծ արժեք են ներկայացնում թե՛ հայ-թաթերի և թե՛ մյուս թաթերի պրոբլեմի ուսումնասիրության համար: Մ. Բարխուդարյանը Շամախու թեմի հոգևոր առաջնորդը լինելով, անձամբ շրջագայել է այս և հարևան շրջանների հայաբնակ գյուղերը, որտեղ հանդիպել է նաև երկլեզու հայերի՝ նրա վկայությամբ՝ XIX դարի 80—90-ական թթ. հայերը թաթերեն խոսում էին ոչ միայն Մադրաստ գյուղում, այլև՝ ուրիշ շրջանների հայաբնակ շատ գյուղերում²:

Նախկին հաշմաս կայարանից ութ կիլոմետր հեռավորության վրա դտնը-վող հաշ-մասն գյուղի հայերի մասին Մ. Բարխուդարյանը գրում է, որ նրանք մոռացել էին հայերենը «Այժմ տաճկերեն է խոսում ժողովուրդս. վասն որոյ ճարահատյալ՝ մի քանի քարոզներ խոսեցի տաճկերեն լեզվով և մխիթարեցի»³:

հաշ-մասն գյուղի հայերի մասին հիշատակում է նաև Մեսրոպ Սմբատյանցն իր «Նկարագիր Ս. Ստեփաննոսի Վանաց Սաղիանի...» աշխատության մեջ. «Երկրորդ թաթախոս գյուղն է հաշ-մասն՝ 30 տուն գերդաստաններով»⁴:

Մ. Բարխուդարյանն ու Մ. Սմբատյանցը հայ-թաթերենի մասին ընթերցողին որոշ պատկերացում տալու նպատակով, իրենց աշխատություններում էջեր են հատկացրել հայ-թաթերեն բարբառի նմուշներին:

Հայ-թաթերի և նրանց բարբառի պրոբլեմներով հետաքրքրվել են նաև ռուս և օտարերկրյա շատ մտավորականներ, որոնք հաստատում են այն միտքը, որ XIX դարում և նրանից առաջ հայաբնակ տասնյակ գյուղերում խոսում էին հայ-թաթերեն⁵:

¹ «Արարատ», 1871, մարտ, էջ 352:

² Տե՛ս Ս. Ղալբանյան, Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, № 4, էջ 85:

³ Մ. Բարխուդարյան, Աղվանից երկիր և դրացիք, Քիֆլիս, 1893, էջ 1335:

⁴ Մ. Սմբատյանց, Նկարագիր Ս. Ստեփաննոսի վանաց Սաղիանի, Տփլիս, 1896, էջ 543:

⁵ Б. Миллер, Таты, их расселение и говоры, 1927, стр. 13.

Այժմ հայ-թաթերեն խոսում են միայն Մադրասայի և Քիլվարի (Ադըրբեյջանական ՍՍՀ, Դիվիշիի շրջան) հայ բնակիչները:

Լեզվաբանության վերջին տվյալների համաձայն, թաթերենը համարվում է ինքնուրույն լեզու և պատկանում է հնդ-իրանական լեզվախմբի արևելյան-իրանական լեզուների ճյուղին: Նրանով խոսող ժողովուրդներն անցյալում ըստ դավանանքի բաժանվել են երեք խմբի՝ մուսուլման թաթեր, հրեա-թաթեր (լեռնային հրեաներ) և հայ-թաթեր: Նրանց բարբառները ժամանակի ընթացքում միմյանց անհասկանալի դառնալով համապատասխանաբար կոչվել են՝ մուսուլման-թաթերեն, հրեա-թաթերեն ու հայ-թաթերեն:

Առաջին երկու բարբառներով խոսում են ավելի շատ մարդիկ, որոնք բնակվում են Անդրկովկասի հյուսիս-արևելյան մասում՝ պատմական Վրացիայի և Զղբաց երկրներում⁶, ինչպես նաև Ապշերոնյան թերակղզում, Ադրբեյջանի Շամախու և Իսմայիլլու շրջաններում:

Մադրասա դիտվում հայոց լեզուն աստիճանաբար դուրս է մղում թաթերենը, որովհետև մադրասցիներն արդեն հասարակական վայրերում թաթերեն չեն խոսում: Գյուղում թաթերեն խոսում է միայն ավագ և միջին սերունդը: 1968 թ. այցելության ժամանակ նկատեցինք, որ քիչ չեն նաև այն ընտանիքները, որոնց մանուկներն էլ վարժ խոսում են հայ-թաթերեն:

Թե՛ Մադրասայի և թե՛ Քիլվարի բնակիչներն ունեն հայկական անուններ. ինչպես՝ Արմենակ, Սեդրակ, Տիգրան, Սարգիս, Խաչատուր, Վարդան, Հարություն և այլն: Նրանց ազգանուններն ունեն «յան» վերջավորություն. օրինակ՝ Սարգսյան, Մովսիսյան, Մելիքյան, Սորսորյան, Գևորգյան, Դոնդարյան, Թավադայան, Մարտիրոսյան և այլն: Այդ երկու գյուղերում էլ կա հայ-լուսավորչական եկեղեցի՝ մեսրոպատառ արձանագրություններով: Քիլվարի հայկական դպրոցը վերջերս փակվել է, իսկ Մադրասայի դպրոցը գործում է 1872 թվականից:

Հայ-թաթերենի արդի վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենի ազդեցությունը ակնհայտ է և այն բառափոխառություններով չի սահմանափակվում:

Հայերենի ազդեցության մասին խոսելիս առաջին հերթին պետք է նշել հայ-թաթերենի հնչյունաբանության, առանձնապես բաղաձայնների համակարգում եղած այն տարրերի մասին, որոնք մուտք են գործել միայն հայերենից և գոյություն չունեն թաթերենի մյուս բարբառներում:

Հայ-թաթերենի բաղաձայնների համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ ի տարբերություն թաթերենի մյուս բարբառների, հատկապես ադրբեյջանական թաթերենի, որտեղ շնչեղության կորուստով խուլ պայթականներն անցնում են ձայնեղ պայթականների շարքը⁷, հայ-թաթերենում դրանք հայերենի ազդեցության ներքո պահպանվում են իրենց հստակ: արտասանությամբ և հակադրվում են ոչ միայն շնչեղ-խուլ պայթականներին, այլև ձայնեղ պայթականներին. օրինակ՝

6 Մ. Բարխուդարյան, Աղվանից երկիր և դրացիք. էջ 167:

7 А. Л. Грюнберг, Язык североазербайджанских татов, Л., 1963, стр. 13

t'ak- միայն, կենա	tak- կաթիլ
pas- հետո	pas- պաս (կրոնական)
pari- անցյալ տարի	pari- բարի և այլն:

Հակադրությունն առաջանալով խուլ պայթականների և շնչեղ-խուլ պայթականների միջև՝ հայ-թաթերենի հնչյունական կազմում երևան է գալիս պայթականների եռաշարք համակարգ՝ b-p-θ, d-t-t' և g-k-χ:

Ուշագրավ է նաև այն, որ հայ-թաթերենի բաղաձայնների համակարգը լրացնում են *c* և *ç* (հայկական *ծ* և *ճ*) բարդ պայթականները, որոնց գոյությունը բացառված է թաթերենի մյուս բարբառներում: Վերոհիշյալ խուլ պայթականների առկայությունը հայ-թաթերենում նույնպես բացատրվում է հայերենի ազդեցությամբ:

Թե՛ խուլ պայթականները և թե՛ խուլ պայթաշփականները հայ-թաթերենում արտասանվում են հայերենի համապատասխան հնչյունների նման: Բարբառում վերոհիշյալ հնչյուններին հանդիպում ենք ոչ միայն հայերենից և ուսերենից փոխառյալ բառերում, այլև՝ իրանական, սեմական ու թուրքական ժազում ունեցող բառերում, ինչպես *usla* «վարպետ», *kotrun* «հաստ» *çpar* «վայծ», *çam* «ծում», *sklt'a* «ճչոց», *cmrān* «ծծել», *cili* «ածելի», *cup* «ցուպ»: Հայերենի ազդեցությունն ակնհայտ է նաև հնչյունափոխության ասպարեզում: Անհամեմատ ավելի սահմանափակելով ձայնավորների ներդաշնակության օրենքի շրջանակները, հայ-թաթերենը մեծ չափերով զարգացրել է շեշտազուրկ ձայնավորների սղումները և ամբողջական վանկերի անկումները. դրա հետևանքով էլ՝ բաղաձայնների շղայլ կուտակումները (հատկապես բառասկզբում). ինչպես, օրինակ՝ *çrpxun* «հոգեպահուստ», *prcundān* «քամել», *tklig* «գագաթ», *zkrtil satān* «զկուտալ», *zxtvil brān* «շատ ուտել, գլխավել», *štraf* «տուգանք» և այլն: Վերոհիշյալ բառերում բաղաձայնները հստորագրար այնպես են արտաբերվում, որ լրջ ձայնավորը քանակապես աննշան է դրսևորվում կամ բոլորովին չի նշմարվում:

Եթե թաթերեն մյուս բարբառներում ուսերենից փոխառյալ բառերում *sp*, *st*, *sk*, *šp*, *šk*, *št* և նման կապակցություններից առաջ տեղի է ունենում ձայնավորների հավելում (ինչպես, օրինակ՝ *ist'ākan* «ստակ», *is-piškā* «սպիչկի», *ust'ol* «ստոլ սեղան»), ապա հայ-թաթերենում այդ նույն փոխառություններն արտասանվում են առանց հավելման. ինչպես՝ *stakan*, *spička*, *stol*, *stul* և այլն:

Հնչյունափոխության, բառաբարդության ու ածանցման հետևանքով առաջանում են նաև միևնույն բաղաձայնների կրկնություններ. ինչպես՝ *burrān* «boridān, «կտրել», *lizzān* «lisidān «լիզել», *čarrav* «čhar rah «խաչմերուկ» իմաստով, *čarrān* «caridān «հնձել» և այլն:

Իմաստի սաստկացման հետ կապված բաղաձայնների կրկնության օրինակներ քիչ կան բարբառում:

Զմոռանանք նշել, որ ձայնավորներն իրենց քանակով և որակական հատկանիշներով գրեթե չեն տարբերվում տեղի հայերեն բարբառի ձայնավորներից: Պարզվում է, որ հենց հայերենի ազդեցությամբ աստիճանական քայքայման են ենթարկվում թաթերենից ժառանգած երկբարբառները:

Հայ-թաթերեն բաղաձայնի բառերում *ou*, *öü*, *ei* երկբարբառների բաղադրիչները հնչում են հստակ, ինչպես ինքնուրույն հնչյուններ, երբեմն էլ՝ որակական փոփոխություններով. օրինակ՝

Թաթերեն	հայ-թաթերեն	պարսկերեն	
lōu	lōv	lāb	շրթունք
gou	gov	gav	եզ
šōu	šov	šāb	գիշեր
xou	xov	xav	երազ, քուն
rāft'eī	raft'ey	rāft'e	գնացել, գնացած:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև քերականության մեջ կատարված այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել հայերենի նմանությունում:

Ածականների համեմատության աստիճանները կազմելիս մադրասցիները դրանց համար իրանական t'ar և -t'arin ձևերը չեն գործածում: Նրանք այդ աստիճանները կազմում են հայերենի նման՝ բաղդատականում դրականի վրա ավելացնում են diyā «ավելի» բառը, իսկ գերադրականում՝ ābūt'unf «ամենա, ամենից» բառը. ինչպես՝ diyā frav «ավելի լալն», ābūt'āni siyā «ամենասև» և այլն:

Հայ-թաթերեն բարբառում, ինչպես հայերենում, տասից-տասնինը թվականներում տասնավորները առաջադաս են և միավորներին միանում են ձ հոդակապով. օրինակ՝ dāyeyk «տասնմեկ», dāddū «տասներկու»: Մյուս բարբառներից հայ-թաթերենը տարբերվում է նաև բաշխական թվականների կազմությամբ: Բարբառիս բաշխականները կազմվում են քանակականների կրկնությամբ, սակայն առանց -t'a թվանիշի (нумератив) հավելման, ինչպես դա կատարվում է թաթերենում. ինչպես՝ dūt'ā-dūt'ā «երկու-երկու», čart'a-čart'a «չորս-չորս» ասելու փոխարեն հայ-թաթերեն ասում են՝ du-du, čar-čar և այլն:

Հայ-թաթերենի բայական համակարգում հայերենի ազդեցությունը զգացվում է ինչպես բայի անդամ, այնպես էլ՝ դիմավոր ձևերում: Հայ-թաթերենը, հայերենից փոխ է առել ոչ միայն քերականական կարգեր, այլև դրանց արտահայտության միջոցներ, որոնցից աչքի է ընկնում բայի հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունը՝ իր մի քանի տարբերակներով՝ -enk, -ink, -ing:

Իրանական գրեթե բոլոր լեզուներում և նրանց բարբառներում այդ վերջավորությունը համապատասխանում է im ձևը, և միայն հայ-թաթերեն բարբառում է, որ այդ ավանդական ձևը հայերենի ազդեցությամբ փոխարինվել է -enk ձևով: Եթե աղբյուրական թաթերեն ասում են rāft' + im «գնացինք», -mit'an + im «գիտենք», ապա հայ-թաթերեն ասում են՝ rāft' + ink, mdust'an + ink և այլն: Բերում ենք այս ձևի կիրառության հայ-թաթերեն մի քանի օրինակ. Umun mdust'anink, k'i saba čī mebuyu «մենք գիտենք, թե վաղը ինչ է լինելու»: Kālām kaštenk, anjaj navedešrā «Կաղամբ ենք ցանել, բայց դուրս չի եկել»: Ništink bvagon, in mārda hameček mstānink amjamun nun xarə. «Պենացք նստեցինք, այս մարդուն հրավիրեցինք (համեցեք արինք) մեզ մոտ՝ ճաշելու (հաց ուտելու)»:

Հայ-թաթերեն բարբառում բոլոր բայերը խոնարհման ժամանակ ստանում են հետևյալ վերջավորությունները՝

հզակի	հոգնակի
-am, -əm, -um	-ink; enK, ing
-i, -yi, -ey	-ind, -int'
-a, -ə, -u	-ənd, -ənt'

Բայի ժամանակային բոլոր ձևերի համար վերոհիշյալ վերջավորությունները կայուն են. դրանց հնչյունական տարբերակները, ինչպես արդեն նշեցինք, առաջանում են հնչյունափոխության այս կամ այն օրենքով:

Բարբառը պատճառականների իմաստ արտահայտելու ձևաբանական միջոց ունի միայն անանցողական բայերի համար: Անանցողականներից, բացառիկ դեպքերում էլ անցողականներից պատճառական բայեր են կազմվում un ածանցով, որն ավելանում է բայի միայն ներկայի հիմքի վրա. ինչպես՝ xardān «ուտել», xarundān «կերակրել»:

Ներգործական սեռի բայերը պատճառական են կազմում վերլուծական միջոցներով: Այս ձևով պատճառականները թաթերեն մյուս բարբառներում փազմվում են saxt'ān «անել» վերացական բայի օգնությամբ, իսկ հայ-թաթերեն բարբառում կազմվում է հայերենի նմանությամբ՝ անորոշ դերբայի և darān «տալ» վերացական բայի հարադրությամբ. ինչպես՝ šušt'ān darān «լվանալ տալ», duvar kešrān darān «պատ շարել տալ», durvan sat'ān darān «հնձել տալ» և այլն:

Հայ-թաթերենի բառային կազմը պարունակում է իրանական, սեմական, թուրքական, ռուսական և հայկական ծագում ունեցող բառեր: Հայերենից փոխառյալ բառերը և նրանցով կազմված բարդությունները զգալի թիվ են կազմում հայ-թաթերեն բարբառում, հատկապես Մադրասայի խոսվածքում:

Քիլվարի և Մադրասայի խոսվածքների միևնույն իմաստն արտահայտող բառերն իրար հետ համեմատելիս նկատվում է, որ փոխառությանը դիմելու անհրաժեշտության դեպքում մադրասցիները դիմել են հայերենին, իսկ քիլվարցիները՝ ադրբեջաներենին:

Դա բացատրվում է նրանով, որ քիլվարցիները երկար ժամանակ շփման մեջ են եղել ադրբեջանական թաթերի հետ: Եթե մադրասցիներն ասում են. չի azg i «ինչ ազգի ես», žov bu «ժողով եղավ», bol žovurt hist'ə «շատ ժողովուրդ կա», iravunk nist'ə «իրավունք չկա» և այլն, ապա քիլվարցիներն ասում են. ci millet' i, iļlas bu, ambar ĵamaat hist'u, lxt'i'yar nist'u:

Հայերենից բառեր փոխ առնելը հին ավանդույթ է հայ-թաթերի համար. դա պարզ երևում է հայերենից փոխառյալ բառերի ցուցակում եղած կրոնական, քաղաքական, առևտրական և կենցաղային տերմինների բնույթից. ինչպես՝ aγot'K «աղոթք», teter «տերտեր», t'akoor «թագավոր», aſturakan «առևտրական», parkent'an «բարիկենդան», zamasə «ժամասեր, համատեսցյալ», varžapet «վարժապետ, ուսուցիչ» և այլն:

Այդ և նման բառերի «հնություն» մասին վկայում են նաև XIX դարի գրավոր աղբյուրները⁸, որտեղ տպագրված են հայ-թաթերեն բարբառով

8. Л. Попатинский, Армяно-таты, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, ч. 20, Тифлис, 1896, стр. 31. Մ. Բ ա թ ա խ յ ա ն, Աղվանից երկիր և դրացիք, Քիֆլիս, 1893, էջ 91: Մ. Ս մ բ ա խ յ ա ն, Նկարագիր Ա. Ատեփան-Նասի..., Տփլիս, 1896, էջ 547:

պատմվածքներ, հեքիաթներ («Yekira biŋoyi hazarra mət'ə», «Pitleyin kuki» և այլն):

Հայերենից փոխառյալ բառերի վաղեմությունը երևում է նաև նրանց յուրատեսակ հնչյունափոխությունից. ինչպես՝ zamasəṛ «ժամասեր, հավատացյալ», mrko «եղջատենդ, մլոքոր», purtoṛ «պղտոր», kryoṛ «գրող» (անեծք), vārt'ōḍṛ «վարդավառ» և այլն:

Վստահորեն կարելի է նշել, որ հայերեն շատ բառեր են մտել հայ-թաթերեն բարբառի բառային հիմնական ֆոնդի մեջ և գործ են ածվում որպես բառարարդությունների բաղադրիչներ, ըստ որում՝ բաղադրիչներից մեկը կարող է լինել հայերեն, մյուսը՝ թաթերեն. ինչպես՝ pasvaurṭan «ձեթ, բուսական յուղ» բարդ բառ է, որը կազմված է հայերեն «պաս» (կրոնական) «վա» հոլովմամբ սեռականի ձևից և թաթերեն սրղան «յուղ» բառից, parl'saat' «շնորհավոր» բարդ բառը կազմված է հայերեն «բարի» և թաթերեն saat' «ժամ» բառերից, koštaŋourī «ցախավիլ» բաղկացած է հայերեն «կոշտ» և թաթերեն ŋourī «ավիլ» բառերից, uširāft'āni «ուշագնացություն» բաղկացած է հայերեն «ուշ, ուշք» և թաթերեն tāft'ān «գնալ» բառերից և այլն:

Փոքր թիվ չեն կազմում նաև հայերենից փոխառած բայաբառերը, որոնք հայ-թաթերենում գերազանցապես դառնում են հարադիր բայերի հիմնական իմաստն արտահայտող բաղադրիչներ. ինչպես՝ aṛot'x satān «աղոթել», anicī vil brān «անհիծվել», zarmanil brān «զարմանալ», zīžvil brān «զզվել», օրտնի satān օրհնել և այլն:

Վերոհիշյալ փաստերը հաստատում են արևելագետների այն կարծիքը, որ այդ շրջանների երկլեզու հայերի թաթերենը իր առանձնահատկություններով խիստ տարբերվում է թաթերենի մյուս բարբառներից, ո՛չ միայն նրանով, որ սույն բարբառում համեմատաբար լավ են պահպանվել իրանական տարրերը⁹, այլև այն, որ հայ-թաթերենը զգալի ազդեցություն է կրել հայերենից:

ЭЛЕМЕНТЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА В АРМЯНО-ТАТСКОМ ДИАЛЕКТЕ

С. Б. КАЛТАХЧЯН

Р е з ю м е

В данной статье рассматривается вопрос влияния армянского языка на татские говоры двуязычных армян села Матраса Шемахинского района и Кильвар Дивичинского района Азербайджанской ССР.

Татский язык относится к группе иранских языков, одним из диалектов которого является армяно-татский. Элементы армянского языка проникли в фонетику, морфологию и синтаксис армяно-татского диалекта. Именно влиянием армянского языка объясняется существование глухих смычных (без придыхательности) р, к, т, а также аффрикатов с и с, которые не существуют в других диалектах татского языка.

Исследование показывает, что наличие элементов армянского языка в значительной степени обусловило своеобразие армяно-татского диалекта и его отличие от европейско-татского и азербайджано-татского диалектов.

⁹ Л. Лопатянский, Армяно-таты, Сборник материалов..., стр. 31.